

կայ մէջ հպատակեցաւ հրէական արա-
րողութեան, այն Տաճարը յորում վի-
ճեց օրինաց վարդապետներուն հետ և
ուսկից վաճառեց զգնողս և զվաճառողս՝
ոչ միայն կործանեցաւ, այլ և վրան
մզկիթ մը բարձրացաւ:

Այս մզկիթը էօմէր խալիֆայն սկը-
սաւ շինել բայց իր յաջորդներն լմնցու-
ցին յամին 640: Մորիա լերան բար-
ձրաւանդակի մը վրայ շինուած է, և ա-
մեն կողմանէ բարձր և գեղեցիկ նոճի-
ներով և աղբիւրներով զարդարած: Այս
մզկիթը մահմէտականք էլ-հալէմ կ'ա-
նուանեն, որ երկու կը բաժնուի, և կը
կոչուին էլ-Աքսա և էլ-Սախսա: Ար-
տաքուստ ընդարձակ շրջապատով մը
պատած է, որոյ երկայնքն է հինգ հա-
րիւր քսան քայլ և լայնքն երեք հարիւր
եօթանասուն. որով քաղքին պարսպին
մէջ մեծ միջոց մը կը դրաւ: Արեւմը-
տեան կողմանէ շատ մը մահմետակա-
նաց տուններ կը պատեն զմզկիթը, ո-
րոց մէջ կը բնակին մզկիթին ծառայու-
թեան կապուած անձինք. որոց մէջ
կան նաև տղոց դպրոցներ և առանձնա-
կանաց աղօթարաններ. իսկ հիւսիսա-
յին կողմը կը տեսնուին Պիղատոսի և
Հերովդեսայ պալատանց աւերակները:

Արտաքուստ մզկիթին պատերը գոյն-
զգոյն թրծուն աղիւսներով զարդարած
է. որոյ վրայ կը տեսնուին արաբական
նկարներ և ոսկեգիր կուրանի տողեր:
Այս մզկիթն գեղեցիկութեան մասին Սու-
ղամնի Տաճարէն վար չի մնար, իսկ
ճարտարապետական արուեստիւ կ'ա-
ռաւելու քան զնա: Կայ մէջը ութան-
կիւնի ձեւով քար մը որ 60 ոտք եր-
կայնութիւն ունի: Մզկիթին գմբէթին
տակ ոսկեզօծ երկաթ վանդակով պա-
տած տեղ մը կայ, ուր տեղն է այս
սուրբ քարը, զոր կը համարին թէ այն
ըլլայ, որոյ վերայ հանգչեցան Յակոբ և
Մէհէմմէտ:

Պ. Լամարդին այսպէս կը նկարագրէ
այս մեծագործ մզկիթը. « Գեղեցիկ սա-
լահարթը (Plate-forme), որ անտարա-
կոյս 'ի բնութենէ պատրաստուած էր,

բայց յայտնապէս մարդկային ձեռքէ
կատարելագործած, պրանչելի խարխա-
մ'էր որոյ վերայ կը բարձրանար Սողո-
մոնի Տաճարը: Այս սալահարթը կը կրէ
այսօր իր վերայ էօմէրի մզկիթը, արա-
բական ճարտարապետութեան զարմա-
նալի շինուածը. որ կարծես թէ ահա-
գին մեծութեամբ մարմարի կամ քարի
հատոր մ'է...: Կարծես դիպուածով
ցանուած բարձր նոճիներ, և աստ անդ
աճած քանի մը ձիթենիներ և կանաչ
ու գեղեցիկ թուփեր, դուրս կը ցատկե-
ցընեն մզկիթին գեղեցիկ ճարտարապե-
տութիւնը և իր պատերուն վայլուն
գոյները »:

Կը շարունակուի:

ՀԻՆԳ ՇԱՐԱԹ ՕԴԱՊԱՐԿԻ ՄԷՋ

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻԻՆ ԵՐԻՑ ԱՆԳՂԻԱՅԻՈՑ

ՅԱՓՐԻԿԷ

(Տես Էրես 91.)

ԳԼՈՒԽ ԻԸ.

Արանչելի երեկոյ մը. — Ճոյին խոհակերոցը.
— Հում մսի վրայ ձառախօտարիւն մը. —
Ճէյմս Պրիսի պատմութիւնը. — Գիշերօ-
րիք. — Ճոյին երազները. — Դանրալա-
փը կ'ելլէ. — Չուկոն պատրաստութիւնը. —
Մորիկը:

Արանչելի երեկոյ մը եղաւ, զոր կաղ-
դուրիչ կերակրէ մը ետքը պատկառուկ
տնկոց զովարար շուքին տակը անցու-
ցին. ոչ չայն և ոչ կրոկը զանց ըրին:

Քէննըտի ամենայն ուղղութեամբ
նոյն այն ուլասիսին թագաւորութիւնը
քալեր էր, անոր թփուտը զննելով.
մեր ուղևորներն այն երկրային դրախ-
տին մէկ հատիկ բնակիչքն էին. ուստի
իրենց ծածկոցներուն վրայ փուռելով
հանգիստ գիշեր մը անցուցին, որ իրենց
առջի քաջածնները մոռցուց:

Յաջորդ օրը, մայիսի 7, արեւը բոլոր իր պայծառութեամբը կը փայլէր. սուկայն անոր ճառագայթներն այն թանձր շուքի վարագուրին մէջէն անցնիլ չէին կրնար: Որովհետեւ բաւական առատ ուտելիք ունէին, տղրդորն որոշեց նոյն այն տեղը յաջող քամիի մը սպասելու:

Ճոյ իր դիւրակիր խոհակերոցը հոն փոխադրեր էր. ուստի հազարումէկ կեւրակրեղէն պատրաստութեանց կ'ըզբաղէր, անհոգ շուայլութեամբ զջուրը գործածելով:

— Ինչպիսի օտար յաջորդութիւն ցաւոց ու հաճոյից, կանչեց ֆէննըտի. այսչափ առատութիւն այնքան կարօտութենէ ետեւ. այդչափ շուայլութիւն այնպիսի թշուառութենէ մը ետքը: Ա՛խ, շատ մօտ էի խենթենալու:

— Սիրելիդ Տիք, ըսաւ իրեն տղրդորը, առանց ձոյին՝ հիմա չկարենայիր պիտի մարդկային անհաստատ բաներուն վրայ խօսելու:

— Ազնիւ բարեկամ, ըսաւ Տիք ձեռքը ձոյին երկընցնելով:

— Բան չկայ, պատասխանեց ձոյ: Փոխարէնը հատուցանելու կարգը հիմա քեզի է, պարոն Տիք, միայն միշտ նախընտիր համարելով որ չըլլայ թէ նոյնպիսի առթի հանդիպինք որ նոյնը ինծի հատուցանես:

— Ողորմելի բնութեան տէր ենք, ըսաւ Ֆէրկըսըն. անանկ ոչինչ բանի համար այնչափ լքանիլ:

— Այնչափ քիչ ջրի համար, ըսել կ'ուզես տէրս: Պէտք է որ այդ տարրը շատ կարևոր ըլլայ կենաց:

— Տարակոյս չկայ, ձոյ, և կերակուրէ զուրկ մարդիկ շատ աւելի կը դիմանան քան թէ ջրէ զուրկ եղողները:

— Կը հաւտամ, վասն զի ըստ պիտոյից մարդ ինչ գտնէ կ'ուտէ, նաև իր նմանն իսկ ըլլայ, թէպէտ և այդ կերակուրը երկայն ատեն սրտին վրայ կը նստի:

— Վայրենիք այդ կերակուրէն զուրկ չեն, ըսաւ ֆէննըտի:

— Այո, բայց անոնք վայրենիք են, և հում միս ուտելու վարժած են. ատանկ բան ինծի զգուանք կը բերէ:

— Այդ բանը իրաւցնէ այնչափ զըզուելի է, ըսաւ դարձեալ տղրդորը, որ ոչ դը կրցեր է հաւատք ընծայել Ափրիկէ ճանապարհորդող առաջին մարդոց պատմութիւններուն, որոնք կ'ըսէին թէ շատ ժողովուրդը հում մսով կը կերակրուէին, ուստի և ոչ ալ լսել կ'ուզէին այդպիսի բան: Արդ այս պարագայից մէջ էր որ ձէյմա Պրիւսի արտաքոյ կարգի դէպք մը պատահեցաւ:

— Պատմէ մեզի այդ բանը, պարոն քեզի մօտիկ ընելու ժամանակ ունինք, ըսաւ ձոյ, հեշտաբար ինքզինքը կանաչ խոտին վրայ տարածելով:

— Սիրով: Ձէյմա Պրիւս՝ Սդերլինկ կոմսութենէն սկովտիացի մըն էր, որ 1768—1772 Նեղոսին ակունքը բնտուելով, բոլոր Ապիսինիոյ աշխարհը քաւեց մինչև ցԴիանա լիճը. ապա Անգղիա դարձաւ, և հոն 'ի 1790 իր ճամբորդութեան պատմութիւնը հրատարակեց: Այլ իրեն պատմածներուն ոչ դը ուզեց հաւատք ընծայել, վասն զի մեր ազգայնոց առաքինութիւնն է անտարակոյս ուրիշի խօսքերուն հաւատք չընծայել: Խափշիկներուն սովորութիւններն այնպէս տարբեր կ'երևնային Անգղիացւոց սովորոյթներէն, որ ոչ դը կ'ուզէր հաւատալ անոնց: Ուրիշ շատ տեղեկութեանց հետ ձէյմա Պրիւս ըսեր էր թէ արևելեան Ափրիկէի ժողովուրդները հում միս կ'ուտէին: Այդ բանը զամենը իրեն դէմ զրգռեց: Կրնար ուզածն ըսել, ոչ դը բանը ստուգելու կ'երթար: Պրիւս արիասիրտ մէկ մըն էր և զբաւաղիր ըլլալու ամենապատրաստ: Այդ տարակոյսները զինքը վերջի աստիճանի կը վշտացնէին: Օր մը Լտըմպուրկ ընկերութե մը մէջ, Սկովտիացի մը անոր ներկայ գտնուելով, ամենօրեայ կատակաբանութեանց առ-

արկայն մէջ բերելով, հում մսին համար ծանոյց թէ իրը ոչ միայն կարելի չէր այլ և ոչ իսկ ճշմարիտ: Պրիւս ձայն չհաննց. դուրս ելաւ և ապա քիչ մը ատենէն ձեռքը եզան մսի հում կտոր մը բռնած ներս մտաւ, զոր ըստ ափրիկեցւոյ ոճոյն՝ աղով ու պղպեղով համեմած էր: — « Պարոն, ըսաւ Սկովտիացիին, որովհետեւ իմ մէկ պատմած բանիս վրայ տարակոյս հանեցիր, գիտցիր որ ինծի մեծ նախատինք մը ըրեր ես. այդ բանը անգործադրելի կարծելով՝ բոլորովին խաբուեր ես: Եւ որպէս զի ամենուն առջին ապացուցանեմ, հիմա հոս տեղս պէտք է այդ հում միսը ուտես, ապա թէ չէ խօսքերուդ իրաւը պէտք է հատուցանես ինծի »: Սկովտիացին վախցաւ, ուստի և դէմքը խեղաթիւրելով՝ հնազանդեցաւ: Այն ատեն ճէյմս Պրիւս, շատ պաշարիւնութեամբ, ըսաւ. « Ենթադրելով ալ որ բանը ճշմարիտ չըլլայ, պարոն, դոնէ ասկէ ետքը չպնդես պիտի որ այդպիսի բան մը կարելի չէ »:

— Շատ աղէկ ըրեր է, ըսաւ ճոյ: Եթէ Սկովտիացին դժուարամարսութիւն ունեցեր է, պատժոյն արժանի էր: Եւ եթէ մենք Անգղիա դառնալով, մեր ճանապարհորդութիւնը տարակուսի մէջ ձգեն...

— Շատ աղէկ, ինչ ընես պիտի այն ատեն, ճոյ:

— Չհաւատացողներուն վիկտորիալիս կտորները առանց աղի ու պղպեղի ուտել պիտոր տամ:

Այս ճոյին մտածութեւնը վրայ միւսները ծիծաղնին զսպել չկրցան: Օրն այս կերպ, զուարճալի խօսակցութիւններով անցաւ. ճանապարհորդը ուժերն ին ստանալով՝ յոյսերնին ալ կ'աճէր, և յուսով ալ վրանին յանդգնութիւն կու գար: Անցեալը գալիքին առջին նախախնամական երազութեամբ մը անհետ կ'ըլլար:

Ճոյ չէր ուզեր այն հեշտալի վայրը թողլու հեռանալու. իր երազոց թա-

զաւորութիւնն էր. կարծես իր բուն տանը մէջ էր. հարկ եղաւ որ իր տէրը այն տեղոյն ճիշդ դիրքը չուրցէ, որ ծանրութեամբ մը իր ճանապարհորդութեան յիշատակաց տախտակներուն վրայ, 15°, 43' երկայնութեան, և 8°, 32' լայնութեան գրեց:

Քէննըտի միայն մէկ բանի մը վրայ կը ցաւէր. այն մանրանկար անտառին մէջ որսորդութեան զբաղիլ չէր կրնար. ըստ իրեն, այն դիրքը քիչ մը վայրենի դազաններէ զուրկ էր:

— Սակայն դու, սիրեցեալդ Տիք, քիչ մը շուտ կը մոռնաս, ըսաւ տղքդուր: Հապա այն առիւծն ու իր մատակը:

— Հէ, կանչեց բուն որսորդի արհամարհութեամբ մը սպաննած կենդանւոյն համար: Բայց յիշաւի, անոնց այս ովասիսին մէջ դռնուիլը զուշակել կու տայ որ աւելի արգաւանդահող երկիրներէ շատ հեռու չենք:

— Շատ պզտի ապացոյց է ատիկայ Տիք. այդ կենդանիք անօթութենէ կամ ծարաւէ մղեալ, շատ անգամ ահագին միջոցներ կը քալեն. անոր համար առաջիկայ գիշերս ալ շատ աղէկ կ'ընենք եթէ աւելի ուշադրութեամբ հսկենք, և նաև կրակ ալ վառենք:

— Այս տաքութեամբ հանդերձ, ըսաւ ճոյ: Բայց և այնպէս եթէ այդ բանը հարկաւոր է՝ ընենք: Սակայն յիշաւի պիտի եթէ այս գեղեցիկ անտառն որ մեզի այնչափ օգտակար եղաւ, հարկ ըլլայ այրել:

— Կը զգուշանանք մասնաւոր կերպով որ չըլլայ թէ այրենք, պատասխանեց տղքդորը, որպէս զի ուրիշ օր մըն ալ այլք կարենան անապատին մէջ ապաւինի տեղ մը դռնել:

— Կը հսկենք, պարոն. սակայն կը կարծես արդեօք որ այս ովասիսը ծանուցեալ ըլլայ:

— Անտարակոյս: Ափրիկէի կեդրոնը յաճախող կարավաններու հանգստեան տեղի մըն է, և անոնց այցելութիւնը

կրնայ ըլլալ որ քեզի շատ հաճելի չըլլայ, ձոյ:

— Արդեօք այս կողմերէս ալ այն քստմանքի Նիամ-Նիամներէն կայ:

— Անտարակոյս, բոլոր այս ժողովրդոց ընդհանուր անունն է. և մի և նոյն կլիմայի տակ, մի և նոյն ժողովրդոց ցեղերը նմանօրինակ ունակութիւններ ունենալու են:

— Բնէ, կանչեց ձոյ: Հանդերձ այսու ամենայնիւ, այդ բանը շատ բնական է: Եթէ վայրենիք կիրթ մարդոց ճաշակն ունենային, ինչ բանի վրայ ըլլալու էր տարբերութիւնը: Ահա ձեզի կտրիճ մարդիկ, զորոնք Սկովտիացիին պէս հում միս ուտելու համար, շատ աղաչելու չէր. մանաւանդ թէ նոյն իսկ զՍկովտիացին հում հում կը կլէին:

Այս շատ զգոն խորհրդածութիւններէն ետեւ ձոյ գնաց գիշերուան համար իր կրակները կարգի դնելու, կարելի եղածին չափ նօսը ընելով զանոնք: Այս զգուշութիւնները բարեբաղդաբար աւօգուտ եղան, անանկ որ հետզհետէ կարգաւ ամենքը խոր քուն եղան:

Յաջորդ օրը օդը դարձեալ չփոխուեցաւ. յամառութեամբ գեղեցիկ ըլլալու կը շարունակէր: Գունտը անշարժ կեցեր էր. և ոչ ճօճմունք մը վրան կ'երևար որ պզտի քամիի շունչ մը յայտնէ:

Տղքորը դարձեալ կը սկսէր անհանգըստութիւն զգալ. եթէ ճանապարհորդութիւնը այդպէս երկըննար, ուտելիք անբաւական կ'ըլլային: Յետ որ քիչ մնացեր էր ջրի պակսութեանը պատճառաւ մեռնելու, հիմա անօթութենէն մեռնելու վտանգի մէջ պիտոր իյնային:

Սակայն քիչ մը ապահովացաւ տեսնելով որ սնդիկը զգալի կերպով ծանրաչափին մէջէն վար կ'իջնար. յայտնի նշաններ կար որ քիչ ատենէ մթնոլորտին մէջ փոփոխութիւն մը պիտոր պատահէր. ուստի որոշեց չուոյ պատրաստութիւնները տեսնելու որ առջի պա-

տահէն կարենայ օգուտ քաղել. բոցը սնուցանող արկղը ինչպէս նաև ջրինը՝ ջրով լեցուեցան:

Յետոյ օդապարկին հաւասարակը շուրթիւնը հարկ եղաւ կարգի դնել, ուրով ձոյ բռնադատուեցաւ իր մետաղէն նշանաւոր մաս մը զոհ ընելու: Առողջութեամբ նաև փառասիրութեան մը տածութիւններն ալ նորէն դարձան իրեն վրայ. տիրոջը հնազանդելէն առաջ շատ դժկամակութիւն ցուցուց. սակայն տղքորը հասկըցուց իրեն որ չէր կրնար անանկ սաստիկ ծանրութիւն մը վեր հանել. թող տուաւ իրեն որ ջուրը կամ ոսկին ընտրէ, այնուհետեւ ձոյ չընդդիմացաւ. այն մետաղէն առատ քանակ մը աւազին վրայ նետեց:

— Ահա այդ մետաղը մեզմէ ետքը եկողներուն համար ըլլայ. շատ զարմանան պիտի բաղդը այդպիսի տեղ մը դտնելու:

— Է՛հ, կանչեց Գէննըտի, եթէ զիտուն ճանապարհորդ մը այդ մետաղի օրինակներուն պատահէր...

— Մի տարակուսիր, սիրելիդ Տիք, որ մեծ զարմանք պիտոր զգայ և այս իր զարմանքը բազմագոյն մեծաթերթ հատորներով պիտոր հրատարակէ. գուցէ օր մը ականջնիս հասնի թէ այս Ափրիկէի աւազուտից մէջ ոսկերքը քարոյի հանք մը կայ:

— Եւ այդ բանին պատճառը ձոյ պիտոր ըլլայ:

Գուցէ գիտուն մը խաղ ընելու մտածութիւնը մխիթարեց զձոյ ու երեսը ժպիտ մը բերաւ:

Օրուան մնացած ժամանակը տղքորը ունայն տեղ մթնոլորտի մէջ փոփոխութեան մը սպասեց: Զերմութիւնը սաստկացաւ, և եթէ ուղասիսին շուրթը չըլլար, անտանելի կ'ըլլար: Զերմաչափը արևուն մէջ հարիւր քառասունութինը աստիճան¹ նշանակեց. կարծես թէ բուն կրակէ անձրև մը օգուն

¹ Հարիւրաստիճանին 69°:

մէջէն կը թափթըփէր: Դիտուած ջերմութեանց մէջէն այս ամենէն սաստիկն էր:

Ճոյ երեկոյեան գիշերօթիքը առջի օրուան պէս պատրաստեց, և տորդորին ու ֆէննրտիին հսկման քառորդները ամենեկին նոր գէպք մը չպատահեցաւ:

Սակայն առաւօտեան ժամը իրեքին ատենները, մինչդեռ Ճոյ կը հսկէր, յանկարծ զգալի կերպով ջերմութիւնը նուազեցաւ. երկինքը ամպերով զոյգուեցաւ ու մթութիւնը սաստկացաւ:

— Հապա զարթիք, կանչեց Ճոյ իր երկու ընկերներն արթնցնելով, ելէք, ահա հովը կը սկսի:

— Վերջապէս, ըսաւ տորդորը երկինքը դիտելով. սակայն փոթորիկ մըն է: Վիկտորիա փութանք, վիկտորիա փութանք:

Անոր հասնելու ժամանակն էր: Վիկտորիան փոթորկին սաստկութեամբը գետինը կը հակէր զնաւակը հետը քաշքըռտելով՝ որ աւազին վրայ գիծ մը փորելով կը քալէր: Եթէ զիպուածով մէջի աւազին մէկ մասը գետինը թափուէր, գունտը կ'ելլէր կ'երթար, և այնուհետև զայն նորէն գտնելու յոյսը ունայն կ'ըլլար:

Սակայն երազաշարժն Ճոյ բոլոր ու ժովը վազեց ու նաւակը բռնեց, մինչդեռ օդապարիկը պատռտուելու վտանգաւ աւազին վրայ կը պառկէր: Տորդորն իր սովորական տեղն անցաւ, բոցարծարծը վառեց ու ծանրութեան աւելորդը գուրս թափեց:

Ճանապարհորդը յետին անգամ մըն ալ ովասիսին ծառերուն նայեցան ուրոնք փոթորկին սաստկութեամբը գետինը կը ծռէին, և շուտ մը գետնէն երկու հարիւր ոտք բարձրութեամբ՝ արևելեան քամիին իրենք զիրենք տալով, մութին մէջ անյայտ եղան:

Կը շարունակուի:

ՀԱՅԻ ՊԱՏԱՌԻ ՄԸ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՄԱՐԴ

ՆԱԾԱԿ ՔՍԱՆԵՐՈՐԴ ՈՒԹԵՐՈՐԴ

(Տես էրես 83:)

Կաթնտոշք (շարունակութիւն):

Մեր հանգստովը շարունակենք քըննելու կաթնատուաց կարգերը: Ուրիշներու վրայ գիտութեան աւելի կարևոր տեղեկութիւններ գտնենք պիտի. սակայն քեզի նկատմամբ աւելի հետաքրքրական տեղեկութիւն գտնելու չենք:

Ե. Միջառակերք:

Ասոնք միջատները կ'ուտեն. իրենց անունն ալ յայտնի կը վկայէ: Զղջիկան պէս կը սնանին. հետեաբար ալ մի և նոյն աղօրիք ակռաներն ունին. այդ բանը հարկ մըն էր: Ասոնք պզտի ցեղ կենդանիք են, և ոչ այնչափ կարևոր, որուն համար ժամանակնիս կորսնցընելու չենք: Խումբին զլուխը՝ ողնին է, մեր աշխարհին կենդանի մը, ոչ շատ մեծ, — 9 բթաչափ երկայնութիւն ունի, — որ անտառներուն մէջ կ'ապրի, և իր փուշերովը, երբ կը կլորի, կճեպին մէջ պատած մեծ շագանակի մը նմանութիւնը կ'առնու: Ասոր շնատամուռքը մեծ գործ մը չունին ընելու, անոր համար ալ ամենը փոքր են. սակայն աւնոր փոխանակ իր առաջին երկու հերձատամուռքը միւսներէն շատ աւելի երկայն են, որպէս զի լաւագոյն կերպով կարենայ գետնէն քալող որսը բռնել: Ներսէն ամենեկին մասնաւորութիւն մը չունի: Ասոր քովը նշանակելու եմ իբր հետաքրքրական մէկ մը, Աւազամուկը, կամ աւազուտից մուկը, որ իր անուամբը հանդերձ՝ մուկ